

Զ-երի այս համառօտ տեսութիւնից հետեւում է ուրեմն որ Ա խումբը ներկայացնում է մեզ Հայելու թարգմանութիւնը անթերի. մինչդեռ B խումբը, ոչ միայն թերի է, այլ և կազմալուծուած: B խմբում որոշ գրութիւններ կամ պատմութիւններ այս կամ այն զլխից դուրս են ձգուում: պարզ երևում է որ գրիչը ջնկում է և ընտրում: Մասնաւորապէս է Զ-ում տեսնում ենք Հայելուց առնուած պատմութիւններ մտած ուրիշ հոգեշահ կամ առականման հաւաքածոյի մէջ (էջ 171^ա)

A խմբի Զ-ից է կատարուել Հայելու միակ տպագրութիւնը 1702 թուին: Այս շատ հազուադիւր հրատարակութիւնը փոքրագիր մի գիրք է, մեծ. 15×10, այսպիսի վերառութեամբ. «ԳԻՐԸ | ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՅ | ՈՐ ԱՍԻ ՀԱՐԱՅՈՒՄ ՎԱՐԸ | տպագրիցեալ ի Հայրապետութեան Տեսան Նահապետի Հայոց | կաթուղիով: | ի թվին քրիստոսի 1702. | իսկ ըստ հայոց ԻմԾԹԱ | մայիսի ամսոյ Ի Աին | ի փառքս մեծազոյնս Աստուծոյ:» Տպագրութեան տեղն և հրատարակիչը անյայտ (տե՛ս և մատենագիտ. Զարբ.): Ունի երկու պատկեր սկիզբը և «Ծանկ ըստ այբուբենից» ճիշտ ինչպէս Զ-երում: Ծանկի զլխին՝ «Հայելի Վարուց յորում կան պատմութիւնք հեշտալուրք և բանք օգտակարք առ ի փրկութիւն մարդկան» (տե՛ս նոյնը Զ-երում): Ծանկում գրութիւնների թիւն է Հ փոխանակ ՀԱ-ի. այս տարբերութիւնը ծագում է նրանից, որ «Վասն Սիրոյն Աստուծոյ» և «Վասն Սիրոյ Ընկերին» գրութիւններ միաձուլուած են, սակայն տպագրում բնագիրն ամբողջ է և ունի լրիւ ՀԱ գրութիւն էջ 331^ա Հայելին վերջանում է որին հետեւում են անմիջապէս երեք պատմութիւններ հրատարակից աւելացրած. 1. «Ընթեռնումք ըն վարս հարանց սրբոյ. թէ Անապատական ոմն ձգնութեամբ մեծաւ աղաչէր զԱստուած ժամանակս բազումս սակա հիւանդութեան ուրուք զոր ունէր յինքեան ...»: 2. «Ընթեռնում ի պատմութիւնս հռոմայեցւոց, թէ Փառազնեայ դուստր Անատասի կայսեր գոլով սիրահարեցեալ ...»: 3. «Պատմեաց մեզ սուրբն Աթանաս աղէկօսանշու հայրապետն, թէ ի Բիւրիտոն քաղաքի

մերձ յԵրուսաղէմ ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի ... (Այս վերջինը հին թարգմանութիւն): Տպագիրն ունի ընդամենը 335 էջ, չունենալով որ և է յիշատակարան կամ թարգմանչի յիշատակութիւն:

Ամփոփելով թուականների վերաբերեալ տեղեկութիւնները կօտանանք.

Ա—գրուած է	1660 փրկչ. թուին
Բ— »	1671 » »
Ա Գ— »	1673 » »
Դ » մօտադրապէս (1736), քերես այս բոլից առայ:	
Ե— » անթուական.	
Զ— »	1679 փրկչ. թ.
Ը— »	1699 » »
Տ(տպագրութիւնը)—	1702 » »

Ուրեմն նազոյն թուականն է 1660 (Ա), որից յետոյ չէ կարող լինել Հայելու թարգմանութեան ժամանակը: Թարգմանչի եւ թարգմանութեան մասին տեղեկութիւն է տալիս մեզ միմիայն Գ Զ-ը. «որ թարգմանեալ եղև ի լատին բարբառոյ հայ բարբառ ձեռամբ Ստեփաննոս վարդապետի իլովացոյ, որ է վերակացու և գանձապետ ի սուրբ կաթուղիկոսարանն Էջմիածնի»:

Լրացուցիչ և աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդում են մեզ անկախ այս մեր ուսումնասիրած Զ-երից, և ուրիշ աղբիւրների, որոնց մասին գալ անգամ:

Դալուստ Տէր Մկրտչեան.

14 յունիսի 1899.



ՏՐԵԽՕՄԵՆ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ.

Աչքի առաջ ունենալով արախօմայ կոչուած աչքի հիւանդութեան վարակիչ յատկութիւնը և տեսողութեան դործաւանի համար ունեցած վրնատակար հետեւանքները, բժիշկները և մանկավարժները առանձին ուշադրութեամբ են վերաբերում դէպ այդ հիւանդութիւնը: Պատարե-

լապէս բժշկել այդ հիւանդութիւնը շատ դժուար է. սովորաբար նա տեսում է շատ երկար: Ըստ անգամ էնդպիսի բնաստութիւն է ստանում և վարակում է ամբողջ գիւղեր և նոյն իսկ դաւառներ: Պատաստանում վնասում աչքերի 3000 օրախօսակցի է յառաջացել: Ահա թէ ինչու միջոցներ ձեռք առնել արախօսակցի դէմ և իւր ժամանակին բժշկել: Առանձնապէս կարեւոր են այդպիսի միջոցները մանաւանդ այն դպրոցներում, որոնք իւրեանց առողջապահական պայմաններով յիշեալ հիւանդութեան գարգացման համար պարտաւ հոգ տանել աւելի դիւրական դպրոցներում և դիւրական համայնքները շրջաններում: որովհետեւ արախօսակցի թէև տարածում է Ժողովուրդի բոլոր խաւերի մէջ, բայց առաւել աղքատ և բազմաթիւ թիւի մեծ մասը աստիճանի վերայ կանգնած Ժողովուրդի մէջ ճարակ է գտնում: Փոքրիկ բնակարաններում կեանք վարող բնակիչները մեծ քաղցով թիւները փոշոտ միջոցաւոր: խոնաւութիւնը, ցեխը, վնաս լուսաւորութիւնը և պակասութիւնը օդափոխութեան նշանաւոր կերպով կանխարտադրում են արախօսակցի հիւանդութեան յառաջանալուն և դանդաղեցնում են հիմնադրապէս նորա առաջն առնելու: Ահա թէ ինչ պէտք է աչքի առաջ ունենան մանկավարժները:

Հենց առաջին բաղադրիկում մենք այդ հիւանդութեան դէմ կատարելու համար մեծ դժուարութեանց կհանդիպենք: և ահա թէ որոնք են այդ դժուարութիւնները: Տրախօսակցի նշանները սղոս են. կոպերի մազաստմաշկի վերայ դուրս են գալիս առանձին տեսակի անհարթութիւններ. բշտիկներ (фолликулы), որոնց գոյնաւորութիւնը պատճառ արախօսակցի յառաջացող առանձին տեսակի վարակիչ նիւթի ազդեցութիւնն է: որ ներգործում է կոպերի մազաստմաշկի վերայ: Թէ ինչպէս է երևան գալիս այդ վարակիչ նիւթը, գեաւ մինչև այժմ, չէ պարզաբանուած: Բայց գրանից արախօսակցի աչքի մէջ ուրիշ այլ և այլ փոփոխութիւններ ևս յառաջ է բերում: Այսպէս օրինակ պատշաճաւոր բժշկութիւն չեղած դէպքերում կոպերի մազաստմաշկի թաղանթը խոցոտում փրկաւորում և ծածկում է սպիւնեղով ու զօրանում է: Աչքի կոպի կոճիկը, թեքում է, արտաւանդները սպիւնների պատճառով անկանոն ձև են ստանում: ներս են ուղղում աչքերը և յաճախակի նորանց թափանցիկ մասին շփուելով յառաջ են բերում այդ թափանցիկ մասերի սղոտում: Այդպիսով ոչ միայն խանգարում է լոյսի ճառագայթների ազատ մուտքը դէպ աչքերը այլ նոյն իսկ կարող է պատահել, որ բոլորովին դադարել: Կարող է

պատահել, որ թափանցիկ եղջերամաշկը խոցոտուի և մինչև անգամ, թէ այլ և թէ աչքի ներքին մասը բոլորովին թափախակալուի, որի հետևանքը կարող է լինել խոցաւորութիւնը տեսողութիւնից: Այդ հիւանդութեան սկզբին ամենից յառաջ աչքի է բնկնում կոպերի մազաստմաշկի վերայ երեւցող բշտիկներէ: Այսպիսով ոչ մասնագէտ շատ բժիշկներ, երբ տեսնեն անգամ նկատում են այդ բշտիկները, երբեմն նոյն իսկ առանց տատանուելու բնորոշում են որ այդ արախօսակց է: Այն ինչ մազաստմաշկի վերայ երեւցող բշտիկները ինչպէս պարզաբանուած է արդէն, կարող են երևան գալ աչքի այլ տեսակի հիւանդութեանց ժամանակ ևս: Այդպիսի բշտիկներ կարող են ունենալ ջրջկոտ-խոզախա (զոլոտի) հիւանդութիւն ունեցող երեւոյթները. նոքա երևան են գալիս պարանոցի, ականջների և մարմնի ուրիշ մասերի գեղցերի ուսնելու հետ միասին: Յաճախ այդպիսի բշտիկները նշան են զանազան տրոտիքի գրգռեցուցիչ վնասակար ազդեցութեանց-փոշու, վնաս լուսաւորութեան և այլն և կամ հետևանք աչքի լուսայ ճառագայթները բեկանող գործարանի հիւանդանալուն: Այդպիսի վնասակար պայմանների հետևանքն այն է լինում որ սկսում է արեան մի ուժիկն հոսանք դէպ աչքի առաջին մասը: հասարում է մազաստմաշկի մէջ, որից անմիջապէս յետոյ երևան են գալիս նորա մէջ բշտիկներ: Կարեւոր է համարում այստեղ երկրորդ անգամ յիշել, որ պահանջում է առանց բոլորովին որեւէ նշանի բշտիկներ են երևում և տխրոյժը դպրոցներում այսպիսի երեւոյթներին շատ է հանդիպում: Արեւմտ պէտք է խիտ կերպով տարբերել հետևեալ տեսակի աչքի հիւանդութիւնները միմեանցից. 1) Տրախօսակց, 2) Փոլիկուլարների բոլորովին բշտիկներով հանգերծ և 3) սովորական հասարակ բշտիկները երեւոյթ առանց բոլորովին մի որեւէ նշանի: Հարցի այս աստիճան կարեւորութիւնը աչքի առաջ ունենալով, կարծում ենք, որ հետաքրքիր լինի ծանոթանալ Գոնիթի և Կոնի աչք հարցի վերաբերեալ նոր աշխատութեանց հետ, որոնք այդ հիւանդութեան մէջ մեծ փորձութիւն են ձեռք բերած:

Կունցի վնասակարապէս բնորոշում է մինչև այժմ քառականգն տարածուած այն կարծիքին, որ աչքի մազաստմաշկի Փոլիկուլարների բոլորովին (ոչ հասարակ Ժողովուրդը այլ և բժիշկները վարակիչ, բայց ոչ վնասողաւոր աչքացաւր յաճախ շփուելով են տրախօսակցի հետ) պէտք է համարել տրախօսակցի սկզբը, զանազանուող վերջինից միայն իւր աստիճանով: Կունցը ուրիշ շատ ակնարկութիւններ նման մեծ խտրութիւն է դնում աչքի այդ երկու տեսակի հիւանդութեանց մէջ:

Նորա կարծիքով փորձուած աչքը համարեա ամէն ժամանակ առանց կասկածելու կարող է գանադանել Փօլլիկուլեարնի բորբոքումը տրախոմայից: Աչքի այս տեսակի հիւանդութիւնը երբէք այնպիսի վատագուտը հետեանքներ չի ունենալ: Ընչպիսին է տրախոման: Կունտը իբրեւ զուտ դպրոցական հիւանդութիւն ընդունում է միայն Փօլլիկուլեարնի բորբոքումը: որովհետեւ շատ փորձեր ցոյց են տուել այդ: և երբեմն մինչև իսկ այդ հիւանդութիւնը առաջ է բերում մի շարք ուրիշ դպրոցական համաճարակ հիւանդութիւններ: Այդպիսի համաճարակ հիւանդութիւններ պատահել են օր. Բրէշլուում և Նիւրադրէլ է Կոնր: Իսկ Գրեզդէնում պատահածները Նիւրադրէլ է Կոնր: Երկու գէպքերումն էլ կասկածում էին թէ տրախոմայ է համաճարակը: Ըսցն մանրակներն բժշկական հետազոտութիւնները պարզեցին: որ դա Փօլլիկուլեարնի բորբոքումն է և համաճարակի ըստը յաջող վախճանը հաստատեց այդ հայեացքը:

Կոնր և Կոնի կատարած բազմակողմանի փորձերը նշանց հասցրին այն եզրակացութեան: որ դպրոցում գոյութիւն կարող է ունենալ միմիայն Փօլլիկուլեարնի բորբոքում: որովհետեւ տրախոմայով վարակում տեղի ունի միմիայն ընդհանուր թաշկինակներ, երեսըրջներ, ընդհանուր լուացարան և այլ բաներ դորձածելու: Առտի վերայիշեալ հեղինակները ընդունում են: որ տրախոման: անտարակոյս գիշերօթիկ դպրոցների համար վատագուտը հիւանդութիւն պէտք է համարել: այսուամենայնիւ կարեւոր չեն համարում դասել այն զուտ դպրոցական հիւանդութեանց շարքը: որովհետեւ միայն դպրոց յանախօնների մէջ չի կարող մէկից միւսին անցնել: Կունտը իբրեւ բացառութիւն չի ընդունում մինչև իսկ այն տեսակի վարակումը: որ կարող է լինի աշակերտների իրար ձեռքեր շփելուց և այլ նման հպումներից: այն որ առ այժմ ոչ մի հաստատուն ապացոյց չկայ թէ այդ միջոցով վարակումներ տեղի ունենում են: Երբ մի որեւէ տեղում տրախոման խիստ համաճարակի բնասութիւն է ստացել և յայտնուել է նաև դպրոցում ի հարկէ: պէտք է ենթադրել: որ վարակումը յառաջացել է դպրոցի միջոցով: Միայն այն ժամանակ կարելի էր ապացուցանել: որ տրախոման դպրոցից է անցնում ժողովրդի մէջ: երբ աչքի առաջ ունենայինք որ դպրոցներում բոլոր աշակերտների մէջ տարածուած է իսկական տրախոման: մինչ շրջապատող բնակիչները ազատ են այդպիսի հիւանդութիւնից: Բայց այդպիսի գէպքեր երբէք չի պատահել:

Կոնր նոյնպէս խիստ մեծ տարբերութիւն է դնում իսկական տրախոմայի: Փօլլիկուլեարնի

բորբոքման և հասարակ բորբոքում յառաջացնող: Փօլլիկուլեարնի մէջ: որը սովորաբար ինքն իրան է անցկենում և երբէք վատագուտը հետեանքներ չի ունենում: Գրէէֆը առաջարկում է աչքի այդպիսի հիւանդութեանը դպրոցական Փօլլիկուլեարնի անուանել: Թէ Գրէէֆի աշխատութիւնը, թէ Ըմիլա Ռեմպլերի և Մայլեզի հետազոտութիւնները ցոյց տուին: որ Փօլլիկուլեարնի այդպիսի գէպքերը յաճախ պատահում են համաճարակից բոլորովին ազատ տեղերում: 1877 թուին Բրէշլուում նշանակուած էր հինգ բժիշկներից մի յանձնաժողով: քննելու քաղաքական դպրոցներից մէկում կասկածելի տրախոմայ հիւանդութիւնը: Նայեցին 5000 աշակերտի և միմիայն 20 ի աչքերը տրախոմայով էր վարակում: 50-ը Փօլլիկուլեարնի բորբոքումով: իսկ 250 Փօլլիկուլեարնի: Ար աչքի այս վերջին տեսակի հիւանդութիւնը զուրկ էր բորբոքումից: այդ մասին խօսք անգամ չի կարող լինել: որովհետեւ ոչ ցուում էին: ոչ բորբոքման այլ և այլ երևոյթներ էին տեղի ունենում: ինչպէս: օրինակ: կարմրութիւն: ժաճը (ճնպո) և արտասույքի հոսանք:

Գրանից յետոյ Կոնր մի քանի տողամ ևս դարձեալ աշակերտների աչքերը քննութեան ենթարկեց և ամէն ժամանակ նոյն հետեանքին հասաւ: Նորա այդ հետազոտութիւնից պարզուեց նաև այն: որ տրախոմայով հիւանդացած աշակերտներից վարակուել էին նաև նոցա եղբայրները և քույրերը: այն ինչ հարեանները ազատ են մնացել: Աչքի առաջ ունենալով այս և շատ սորանման գէպքեր: եկաւ այն եզրակացութեան: որ վարակման իբրեւ որան ներկայացնում է ոչ թէ դպրոցը: այլ բնասանքը: Կոնր այս հայեացքը հաստատուեց տրախոմայի մի համաճարակով: որ յառաջ եկաւ Պրեսլուի խուլումուշներին համար կառուցուած հիմարկութեանց մէջ: Վարակման պատճառները այստեղ: ըստ երևոյթին: ընդհանուր լուացարաններն և երեսըրջներն էին: որովհետեւ վարակուել էին միմիայն գիշերօթիկները: երթեկները բոլորովին ազատ էին մնացել: Այս աչքի առաջ ունենալով Կոնր ընդգէմ է: որ տրախոմայի համաճարակի ժամանակ դպրոցները վաղում են:

Յառաջ բերեալ դարձեալ երկու հետաքրքիր և հրահանգելի փաստեր: Հասարակ բշակներ պարունակող դպրոցական Փօլլիկուլեարնի տարախոմայի լինելը պարզարանելու նպատակով Մայլեզը և Գրէէֆը թէ իրանց և թէ այլոց աչքերին քսեցին վարակիչ հիւթից չվարակուեց: Միւս կողմից Դէնսֆը և Լիբրէլը բժշկական փորձերի ժամանակ տրախոմայով վարակուելով: չնայած յարմար ժամանակին ձեռք առած ամէն տեսակ հնարաւոր միջոցների: դարձեալ ենթա-

կայ եղան նորա բոլոր ստորագրեցուցել հետեւանքներին:

Այսպիսով ուրեմն, Կաթիկ և Կոնկի աշխատութիւնները յոյց են ապիտ: որ զպրօքներում աշակերտներին առանձնանալու համար ձեռք առած բոլոր խնամ միջոցները արդիւնաւոր հետեւանք չեն կարող ունենալ: Միւս կողմից այդպիսի միջոցները անհրաժեշտ են մինչև անգամ արախօմայի չափ ոչ վտանգաւոր բայց տարափոխիկ Ֆօլիկուլեարնի բորբոքման ժամանակ: Հասարակ Ֆօլիկուլոյը երբէք վտանգաւոր չի կարող լինել: այլ պէտք է ձեռք առնել բժշկական ամենահասարակ միջոցներ:

Տրտմաման խնամ առանձնութիւն չի պահանջում: նրա առաջն առնելու համար հարկաւոր են մշտական վերահսկողութիւն և առանձին բժշկութիւն: Առաջի աչքի առաջ ունենալով սուր և Ֆօլիկուլեարնի բորբոքման տարափոխիկ յատկութիւնը անհրաժեշտ է զպրօքներին վերայ առանձնապէս սխտեմատիկական բժշկական վերահսկողութիւն ունենալ: Եթէ զանազան պատճառներով այդպիսի վերահսկողութիւն կտրել չէ: այդ դէպքում բժիշկը պարտաւոր է ուշ գործնել արախօմայով կամ Ֆօլիկուլեարնի բորբոքումով կատկածելի հիւսնդ աշակերտին թողնել զպրօք միմիայն բժշկական ամենախնամ քննութիւնից յետոյ և ապա ենթարկել նոյն բժշկի մօտ կանանաւոր բժշկութեան:

Գ. Զ.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԳԱՑՈՒԹԻՒՆ ԵՎ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Շարունակութիւն) *

Դ.

ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵՆԸ.

Վիշապ եւ ամպրոպային կոխ:—Առասպելաբանութեան միջ վիշապը փոթորկի պատուահոգի և փոթորկայից ամպի անձնա-

ւորումն է. հենց ինքը փոթորկը: պատառհոյմն ու ամպը մի շար ոգի սր սփորարար օձի կերպարանքով է ներկայանում: բայց և զանազան կերպարանքներ է ընդունում: Սուրա գէմ կուռւմ է նոյն օգերեղթի բարի անձնաւորութիւն ամպրոպային աստուածութիւն որը նոյնպէս զանազան կերպարանքներով է պատկերանում:

Ինչ է վիշապը հայոց մէջ: «Վիշապ» բառը որ ժողովրդի մէջ նաև «ուշապ» է արտասանուում: հաւանօրէն իրանացիներից է անցել հայերին և պարսից ամպրոպային օձի Աժիի մոկկիրն է: Սուրբարեւ ամեն նշ որ հնում և այժմ հայոց մէջ պատմում է վիշապի մասին ներկայացնում է նորան իբրև փոթորկի ամպրոպի անձնաւորութիւն: Շատ բան հարկաւ մտնել է բայց բաւական է որ մեր գրողները համաձայնեց ուրիշ ազգերի գրողների հետ որ մեր վիշապի ամպրոպային բնաւորութիւնը պարզուի:

Ամենից առաջ բերնիք մի հատուած: որ հ. Ալիշան² վերագրում է Անանիա Շիրակացուն կամ մի շարիշ հին բնախօսի: «Երազս փոթորիկ հոգմոյ զոր ի բաջազանս և յառապելս վիշապ հանել տան: փոթորիկն հոգմ է որ ի յերկրէ ի վեր ելանէ: ուր վիհք ինչ հատեալ լինին ի քակ և ի խոռոչացեալ տեղեաց ինչ որ ի փող անկեալ ընդ երակս երկրի և ել ինչ գտեալ միաժողով ի վեր գիմեալ թանձրացեալ ամպով ահագին զրրիւնս ոռնէ: մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել և զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանել և ընկնուս յերկիր: և այս է զոր վիշապ հանել տան: Նոյն տեղում բերած է և վանական վարդապետից. «Եայլ և այլ կողմանց հոգմ շնչէ և ընդ իրար գիպի այն Փոթորիկ ասի թէ ոչ յաղթեն զիրար՝ ուրբին ընդ իրար և ի վեր ելանեն: արմարք զայն տեսեալ՝ վիշապ կարծեն կամ այլ ինչ: Նոյն գրքի մէջ եր. 153 բերած է «փոթորկի» մասին Սարկաւազ վարդապետից. «Առասպելական օտոթեանն ունկն դնել և

¹ H. Hübschmann, Armenische Grammatik I. hr. 247.

² Հին հայագիտ. hr. 66: Ծան.

* Տես. Արարա 1899 թ. համար է. hr. 304: